ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-246-29.01.2018,07.02.2018-ՊԻՄԻ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 14-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածի 14-րդ մասում կատարել լրացում՝ ամրագրելով, որ ինչպես Հանրային խորհրդի նշանակված անդամների, այնպես էլ Հանրային խորհրդի նախագահի գործունեության վաղաժամկետ դադարեցման հարց կարող է քննարկվել նրանց նշանակումից ոչ շուտ քան մեկ տարի հետո և նշված անդամներին նշանակած Կառավարության գործունեության ընթացքում ոչ ավելի, քան մեկ անգամ: Նախագծի լրամշակված տարբերակն արտացոլված է համապատասխան տեղեկանքում:	Նախագիծը լրամշակվել է:	**Ընդունվել է:**
2.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ սահմանելով, որ Հանրային խորհրդին առընթեր գործում է Ազգային փոքրամասնությունների հարցերով պալատ, որի կազմավորման կարգը և գործառույթները սահմանվում են օրենքով: Լրացումը պայմանավորված է «Ազգային փոքրամասնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առկայությամբ, որով, ի թիվս այլնի, նախատեսվում է Հանրային խորհրդին առընթեր ստեղծել ազգային փոքրամասնությունների հարցերով	Նախագիծը լրամշակվել է:	**Ընդունվել է:**

			պալատ, որը կծառայի որպես հարթակ ազգային փոքրամասնությունների հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Նախագծի լրամշակված տարբերակն արտացոլված է համապատասխան տեղեկանքում:		